ՀՏԴ : 947.925 + 902.6(479.25)
DOI https://doi.org/10.52853/25792830-2021.1-180

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԴՎԻՆԻ ԹԱՆԳԱՐԱՆԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՐԵՎ ՍԱՄՈՒԵԼՅԱՆ*

Հոդվածը նվիրված է Հայաստանի պատմական մայրաքաղաք Դվինի պահպանության և վերջինիս թանգարանացման կազմակերպման հիմնախնդիրների վերհանմանը, որոնք կարոտ են հրատապ լուծման, ինչպես նաև՝ մի շարք անհրաժեշտ համալիր միջոցառումների իրականացման:

Բանալի բառեր – հնավայրի թանգարանացում, Դվին պատմական մայրաքաղաք, հնագիտական հուշարձան, հնագիտական ազգային պարկ, արգելոցի ստեղծում, ճարտարապետատարածական կազմակերպում, բացօթյա ցուցադրություն:

Ներածություն

Հայաստանի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրման, պարբերացման և ժամանակագրական համակարգի ձևավորման, լեռնաշխարհին բնորոշ հասարակական զարգացումների առանձնահատկությունների լուսաբանման ու պատմամշակութային միջավայրի ուսումնասիրության համար հիմնարար նշանակություն ունեն հնագույն մայրաքաղաքների՝ խոշոր առևտրատնտեսական, վարչական և մշակութային կենտրոնների ուսումնասիրություններն ու հետագա թանգարանացումը:

Հայաստանի պատմական մայրաքաղաք Դվինի պահպանության և թանգարանացման կազմակերպման հիմնախնդիրները կարոտ են հրատապ լուծման, ինչպես նաև՝ մի շարք անհրաժեշտ համալիր միջոցառումների իրականացման: Մերօրյա աշխարհում նման միջոցառումների կազմակերպումն ունի արդիական համատեքստ՝ հնավայրերի պահպանության, դրանց վերազարթոնքի, նորովի օգտագործման և մասնավորապես՝ թանգարանացման տեսանկյունից:

Հայաստանի Հանրապետության հնագիտական հուշարձանների զգալի մասն այսօր վտանգված է ոչ միայն բնածին գործոնների քայքայիչ ազդեցությունից, այլև մարդածին՝ տարածքի խիտ բնակեցման, տնտեսական գործունեության, հողօգտագործման և բազմաթիվ այլ գործոնների պատճառով: Մշակութային քաղաքականության կարևորագույն խնդիրներից է տնտեսական կամ այլ բնույթի գործունեության հետևանքով վտանգված կամ անխուսափելի կործանման ենթակա հուշարձանների դաշտային հետազոտությունների իրականացումը:

---

* Հայաստանի ճարտարապետության ու շինարարության ազգային համալսարանի միջազգային և միջբուհական համագործակցության բաժնի վարիչ, ճարտարապետության թեկնածու, arevsam@gmail.com, հոդվածի ներկայացման օրը՝ 21.12.2020, գրախոսման օրը՝ 18.01.2021, տպագրության ընդունման օրը՝ 01.02.2021:

Թվարկած խնդիրների ընդհանուր համապատկերում հատկապես շահում են այն երկրներն ու հասարակությունները, որոնք իրականացնում են պատմամշակութային ժառանգության ուսումնասիրության և արդիականացման համապարփակ ու հայեցակարգված ծրագրեր և ունեն դրանց արդյունքների համակողմանի ներկայացմանն ու հանրահռչակմանը նպաստող ծառայությունների զարգացած ցանց:

Հայտնի է, որ պատմամշակութային ժառանգության պահպանումն ու թանգարանացումը բազմապրոֆիլ ծրագրեր են, որոնք ներառում են հնագիտական ու ազգագրական, բնակելի ճարտարապետության ու պատմական քաղաքաշինության, միջավայրի գեղագիտական կազմակերպման, ինչպես և՝ նորովի օգտագործման, զբոսաշրջության կազմակերպման ու նշյալ ոլորտի խթանման և այլ բնագավառներ: Հետևաբար, անհրաժեշտություն է համարվում հնավայրերի կոնսերվացմանը նպատակաուղղված թանգարանացման ճարտարապետական կազմակերպումն ու ոլորտի առջև ծառացած հիմնախնդիրների լուծման ուղիների ռազմավարության մշակումն ու իրագործումը[1]:

Պատմական բնակավայրերի մեծ քանակն ու խտությունը նկատի ունենալով՝ ՀՀ հնագիտական ժառանգության պատշաճ պահպանության և օգտագործման առավել ընդունելի մոտեցումներից է հնագիտական ազգային պարկերի, արգելոցների ստեղծումը[2]:

Նման ծրագրի մշակման համար բացառիկ հնարավորություն է ընձեռում Հայաստանի պատմական մայրաքաղաք Դվինը: Հնավայրը առանձնանում է քաղաքաշինական-հատակագծային կառուցվածքի, պաշտպանական ընդարձակ համալիրի, պաշտամունքային, զորանոցային, տնտեսական համալիրների, բնակելի թաղամասերի, դամբարանադաշտերի ինքնատիպ համադրություններով:

Դվին քաղաքատեղին, որ շուրջ հազար տարի (4-13-րդ դդ.) եղել է նաև երկրի վարչաքաղաքական, պաշտպանական, առևտրատնտեսական և մշակութային խոշոր կենտրոն, հիմնադրվել է 330-ականներին Արարատյան դաշտի հյուսիսային մասում՝ Գեղամյան լեռնաշղթայի հարավային ստորոտում՝ այն ժամանակ այդտեղով հոսող Ազատ գետի ձախակողմյան բլրի և նրան հարակից տարածքի վրա:

Իր գոյատևման ընթացքում քաղաքը զարգացել և ընդարձակվել է գետի ընթացքով դեպի հարավ, և այժմ նրա քաղաքային պարսպի հետքերը և հնագիտական մշակութային շերտերը նկատելի են մի քանի հարյուր հեկտարի վրա՝ ներկայիս Հնաբերդ, Վերին Արտաշատ, Նորաշեն, Այգեստան և Բերդիկ գյուղերի կառուցապատված և մշակելի հողատարածքներում:

---

[1] **Սամուելյան Ա.,** Հայաստանի պատմական մայրաքաղաքներից Արմավիրի, Արտաշատի, Դվինի պահպանության և թանգարանացման ճարտարապետական կազմակերպման խնդիրները, թեկնածուական ատենախոսություն:

[2] Տե՛ս Ծրագիր Հայաստանի Հանրապետության հնագիտության զարգացմանը նպաստող միջոցառումների 2017-2025 թվականների, Հավելված №1, ՀՀ կառավարության, 2017 թ. օգոստոսի 10-ի նիստի № 34 արձանագրային որոշման:

Դվինի հնագիտական պարբերական պեղումները, որոնք սկսվել են 1937 թ. և պատերազմական տարիների կարճատև ընդհատումով շարունակվում են մինչ այժմ, ընդգրկել են միջնաբերդի բլրի գագաթը, արևմտյան լանջը, արևմտյան ու հարավարևելյան ստորոտները և միջնաբերդից հարավարևմուտք ընկած, այսպես կոչված, կենտրոնական թաղամասը, որտեղ կենտրոնացված են քաղաքի գլխավոր պաշտամունքային կառույցները:

Դվինի տարածքը, շնորհիվ իր պաշտպանական առումով բնականորեն հարմար դիրքի (բլուրը, Ազատ գետը), շրջակա ոռոգելի և արգավանդ հողատարածքների, բնակեցվել է դեռևս Ք.ա. 3-րդ հազարամյակից[3]:

Հուշարձանների թանգարանացման կարևորագույն խնդիրներից է հնագիտական ժառանգության պատշաճ պահպանությունը և ժամանակակից նորագույն միջոցներով ամրակայումը: Հայաստանում պահպանվել են հնագույն քաղաքներ, որոնցից միայն Էրեբունին է ինչ-որ չափով հասանելի հանրությանը, իսկ պատմական այլ մայրաքաղաքներ, մասնավորապես Դվինը հնավայրից բացի չունեն այլ կարգավիճակ:

Այսպիսով՝ համադրելով միջազգային և հայկական փորձը՝ հանգում ենք նրան, որ արգելոցները և արգելոց-թանգարանները համարվում են մշակութային անշարժ և շարժական, նյութական և ոչ նյութական ժառանգության համալիր պահպանման ու կառավարման արդյունավետ մշակութային կազմակերպություններ: Արգելոցի ստեղծումն ապահովում է հուշարձանախմբի ամբողջ տարածքի պատշաճ պահպանությունը, մասնագիտական ամբողջական ուսումնասիրման ու հանրահռչակման հնարավորությունը, զբոսաշրջության երթուղիներում արգելոցի տարածքի ներգրավումը, ինչպես նաև պետական և այլ աղբյուրներից ֆինանսավորման առավել արդյունավետ կառավարումն ու օգտագործումը: Արգելոցների ստեղծումը միտված է պատմական, հնագիտական, ճարտարապետական անշարժ հուշարձանների, հուշարձանախմբերի, պատմական և բնապատմական միջավայրի, մշակութային այլ արժեքների ուսումնասիրման և հանրահռչակման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Ներկայումս մշակութային լանդշաֆտները դիտարկվում են որպես բնապահպանական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, ռեկրեացիոն արժեքներ ներկայացնող հանրապետական և (կամ) միջազգային նշանակություն ունեցող տարածքներ, որոնք բնապատկերների ու մշակութային արժեքների զուգորդման շնորհիվ կարող են օգտագործվել գիտական, կրթական, մշակութային, ժամանցի և այլ տնտեսական նպատակներով, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ՝ ազգային պարկ[4] կամ արգելոց: Նման մոտեցում ամրագրում է նաև միջազգային պրակտիկան՝ մշակութային լանդշաֆտները դիտարկելով որպես մշակութային ժառանգության տարածաշրջանային համակարգերի ձևավորման հիմնա-

---

[3] **Ղաֆադարյան Կ.,** Դվին քաղաքի հիմնադրման ժամանակի և միջնաբերդի հեթանոսական մեհյանի մասին, «Պատմաբանասիրական հանդես», 1996, № 2, էջ 41-58:

[4] Տե՛ս ՀՀ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» 2006 թ., օրենքի հոդված 3-րդը:

կմախք՝ բաղկացած հատուկ պահպանվող տարածքներից, բնակատեղիներից, պատմամշակութային արգելոց թանգարաններից և հատկապես մշակութային ու բնության ժառանգության բաղկացուցիչների համադրությամբ ստեղծված ազգային պարկերից[5]:

Մեր իրականության մեջ օրապահանջ և լուծման կարոտ հիմնախնդիր է հին և միջնադարյան բնակավայրերի թանգարանացման հարցը: Այսպիսով անհրաժեշտ է փաստագրել պատմական Դվինի հնագիտական հուշարձանների թանգարանացման նախադրյալներն ու ներուժը: Դրանց կիրառման ուղղությամբ թեև պետական մակարդակով կատարված են բավական վարչական և կազմակերպական քայլեր, սակայն քաղաքատեղիի պատշաճ արժևորումն օրապահանջ խնդիր է: Հայաստանի Հանրապետության տարածքում դեռևս չկա հնագիտական հուշարձանի թանգարանացման արդի միտումներին լիարժեքորեն համապատասխանող որևէ օրինակ, և պատմական Դվինի թանգարանացումը պատմամշակութային բնապատկերների լավագույն պահպանության ձև կարող է հանդիսանալ:

Հնագիտական արգելոցների ձևավորման կարևոր պահանջներից մեկը թանգարանացվող հնավայրերի անմիջական հարևանությամբ զարգացած ճանապարհային ցանցի առկայությունն է, ինչն ունենք Դվինի պարագայում:

Դվինը, ունենալով հնագիտական հարուստ ժառանգություն, պատշաճ թանգարանացման պարագայում կարող է ապահովել հետաքրքիր և բովանդակալից ցուցադրություն, դառնալ պատմամշակութային և գիտակրթական յուրահատուկ կենտրոն: Միաժամանակ այն կարող է լինել նաև Դվին զբոսաշրջային երթուղու առանցքային կենտրոնը և տարածքի հանրահռչակման գլխավոր կենտրոներից մեկը: Հուշարձանի հետագա պահպանության և այն այցելուներին պատշաճ մակարդակով ցուցադրելու համար անհրաժեշտ է կատարել հետազոտական, ամրակայման և մասնակի վերականգնման աշխատանքներ:

Արգելոց-թանգարանի բովանդակությունը կարող է ընդգրկել համալիր մոտեցումներ, առաջին հերթին հուշարձանի ամրակայման, մասնակի վերականգնման, ինչպես նաև որոշակի վերստեղծման աշխատանքներ, ամբողջ տարածքի ճարտարապետատարածական կազմակերպում, թանգարանի, բացօթյա ցուցադրության, գիտահետազոտական կենտրոնի, սպասարկման և այլ անհրաժեշտ նոր ենթակառուցվածքներ:

Նկատի ունենալով հուշարձանների պահպանության ոլորտում վերջին տարիներին կատարված բազմաթիվ խախտումները, առաջարկվել է ստեղծել քաղաքատեղիի տարածքների պահպանական գոտևորման հստակ համակարգ՝ նկատի ունենալով նաև այդ տարածքում առկա արդի բնակավայրերի բնական կենսագործունեությանն անհրաժեշտ հողօգտագործման պայմանները, ներառելով նաև որոշակի սահմանափակումներ: Քաղաքատեղիների պահպանական գոտիների համակարգի համար հարկ է մշակել հա-

[5] **Мазуров Ю.** Уникальные территории: концептуальный подход к выявлению, охране и использованию, Уникальные территории в культурном и природном наследии регионов, М., 1994, стр. 31-40.

տուկ սահմանափակումներ, որոնք առավելագույնս չեն խաթարի հնագիտական շերտերը և անհրաժեշտության դեպքում հնարավորություն կտան հետախուզական հատվածական պեղումներ իրականացնել:

Քաղաքամայր Դվինի թանգարանացման ստորև ներկայացրած հայեցակարգային մոտեցումները ներառում են այնպիսի լուծումներ, ինչպիսիք են հնավայրի պահպանություն, թանգարանի շենքի կառուցում, բացօթյա ցուցադրություն, ինչպես նաև զբոսաշրջային տեղեկատվական ու սպասարկման կենտրոն:

Հնավայրի պահպանություն

Ելնելով այն հանգամանքից, որ վերականգնման ենթակա հուշարձանները վերջին տասնամյակներում չեն պեղվել, և որոշ պեղված հատվածներն արդեն իսկ նորից ծածկվել են հողաշերտով, անհրաժեշտ է կատարել մասնակի պեղման ու մաքրման աշխատանքներ, ինչպես նաև հուշարձանների բնապայման ուսումնասիրում՝ ֆոտոֆիկսացիա, ճարտարապետահնագիտական չափագրում, հուշարձանների մասնակի վերականգնման և ամրակայման աշխատանքներ և այլն[6]:

Հնավայրի պահպանման աշխատանքների առաջին փուլով նախատեսվում է Միջնաբերդի Արևմտյան կողմում՝ խանդակից այն կողմ տարածված, կենտրոնական թաղամասի՝ քաղաքի հոգևոր կենտրոնի հուշարձանների ամրակայումը և մասնակի վերականգնումը: Կենտրոնական թաղամասը ունեցել է իր առանձին պարիսպը՝ միջնաբերդին ուղղված դարպասով, և հաղորդվել է դրա հետ խանդակի վրա գցված կամրջով: Այդ հատվածում բացահայտվել են նաև դեպի կենտրոնական թաղամաս եկող ջրատարի խողովակաշարեր[7]: Դվին քաղաքատեղիի միջնաբերդում և կենտրոնական թաղամասում հնագիտական պեղումներով բացահայտվել են պատմաճարտարապետական մեծ արժեք ներկայացնող մի շարք կառույցներ, որոնց ամրակայման և պատշաճ ներկայացման աշխատանքները առաջնային են, դրանք են Սբ. Գրիգոր կաթողիկե և միանավ եկեղեցիները, պատրիարքական ապարանքն ու հարակից կառույցները, տարբեր ժամանակաշրջանների բնակելի համալիրները, Արշակունիների գահադահլիճը:

Թանգարան, գիտահետազոտական կենտրոնի շենքի կառուցում

Դվինի հնավայրի թանգարանացումը կարող է լինել թանգարանացման լավագույն փորձերից մեկն ինչպես Հայաստանում, այնպես էլ աշխարհում: Ունենալով հնագիտական հարուստ ժառանգություն՝ արգելոցի թանգարանը կարող է ապահովել հետաքրքիր և բովանդակալից ցուցադրություն: Թանգարանը պետք է ունենա՝ մշտական ցուցադրությունների սրահ, ժամանակավոր ցուցադրությունների սրահ, կոնֆերանսների/ նիստերի դահլիճ, դպրոցականների համար աշխատանոցներ, գրադարան, մեդիադարան, լու-

---

[6] **Սամուելյան Ա.,** Դվինի թանգարանացման հայեցակարգային մոտեցումներ, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի տեղեկագիր, 2019, № 3, էջ 3-12:

[7] **Ղաֆադարյան Կ.,** Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1, Երևան, 1952, էջ 30-32, 78-80:

սանկարների ֆոնդ, վարչական, գրասենյակային և տեխնիկական տարածք, սրճարան, կրպակ, ֆոնդապահոց, հնագիտական ուսումնասիրությունների լաբորատորիա, հնագիտական արշավախմբի հանգստի համար նախատեսված շենքեր (ներկայումս հնագիտական արշավախմբերի բազան տեղակայված է միջնաբերդի տարածքում՝ փայտե տնակներում):

Քանի որ Դվինի պեղումների արդյունքում հայտնաբերված հնագիտական գտածոների մեծ մասը գտնվում է Հայաստանի պատմության թանգարանում, առավել նպատակահարմար ենք համարում Դվինի թանգարանը դարձնել Հայաստանի պատմության թանգարանի մասնաճյուղ: Այսպիսով՝ շենքում ցուցադրման սահմանափակ մակերեսը արդարացվում է, որովհետև բուն թանգարանի ամբողջ գիտական ապարատը տեղակայված է Երևանում:

Դվինի թանգարանի առանձնահատկությունն այն է, որ, բացի ինստիտուցիոնալիզացված հատվածից, այցելուն հնարավորություն կունենա անցնելու նաև պեղված հնավայրի արդեն իսկ օգտագործվելիք ճանապարհներով: Այստեղ նույնպես պետք է պահպանված լինեն բոլոր անհրաժեշտ պայմանները՝ ելքի-մուտքի, տեղեկատվական ցուցանակներ: Թանգարանի այս հատվածի կառավարման համար առաջարկվում է ներդնել մուտքի սահմանափակման սկզբունքը: Նախապես մասնագետների կողմից պետք է հաշվարկել հնարավոր այցելուների ամենամեծ թիվը և անցկացման առավելագույն ժամանակահատվածը:

Բացօթյա ցուցադրությունը

Դվինի թանգարանից զատ, հնավայրի տարածքում նախատեսվում է բացօթյա ցուցադրությունը: Թանգարանն առավել հետաքրքիր դարձնելու և նոր ենթաբաժիններ ավելացնելու համար նախատեսվում է նաև բացօթյա թանգարանի տարածքում (նախապես ընտրված ու պեղված տարածքում) ունենալ երեխաների համար նախատեսված գիտահանրամատչելի ծրագիր:

Հնագետների աշխատանքային պայմանների բարելավման հետ զուգահեռ՝ Դվինը իր զբոսաշրջային ներուժը կմեկտեղի գիտական ներուժի հետ, և արդյունքում հնարավոր կդառնա ունենալ իր տեսակի մեջ եզակի ենթակառուցվածք, որտեղ հուշարձանի պահպանությունն ու հանրահռչակումը իրականացվում են համալիր մոտեցմամբ:

Զբոսաշրջային տեղեկատվական և սպասարկման կենտրոն

Դվին հնավայրը, չնայած իր մշակութային հարուստ ժառանգությանը, ներկայումս չի հանդիսանում ակտիվ զբոսաշրջային կենտրոն: Գտնվելով հյուսիս-հարավ զբոսաշրջային երթուղու վրա՝ այն գլխավորապես եղել է հնավայր՝ հետաքրքրելով միայն նեղ մասնագիտական ոլորտի ներկայացուցիչներին (հնագիտական արշավախմբեր, հնագետներ, մշակութաբաններ, ներգրավված զբոսաշրջիկներ): Արդյունքում Դվինը մնացել է որպես գիտահետազոտական տարածք, որը, սակայն, ենթակառուցվածքների բացակայության պատճառով դեռևս չի դարձել ո՛չ գիտահետազոտական և ո՛չ էլ զբոսաշրջային կենտրոն:

Վերը նշված բոլոր ենթակառույցների անխափան և համալիր աշխատանքը Դվինը կդարձնեն զբոսաշրջային ակտիվ կենտրոն: Վերոնշյալը կօգնի՝

1. երթուղու ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, բնակչության որոշակի հատվածի զբաղվածության ապահովմանը,
2. բնության և պատմամշակութային օբյեկտների կառավարմանը և պահպանությանը նպատակաուղղված գործընթացներում նոր, առաջադիմական գործելակերպի ներդրմանը՝ դրանք դիտելով որպես մեկ ամբողջական բնապատմական լանդշաֆտ:

Եզրակացություն

Հայաստանն այսօր հեռանկարային զարգացման գերակայությունների մեջ առանձնահատուկ տեղ է հատկացնում զբոսաշրջությանը՝ հատկապես նկատի ունենալով երկրում պատմամշակութային հարուստ ժառանգության առկայությունը: Այնուամենայնիվ, չնայած հարուստ մշակութային ժառանգությանը, զբոսաշրջության զարգացման տեսանկյունից երկրում առկա չեն անհրաժեշտ ինստիտուցիոնալ ենթակառուցվածքները, որոնք պատմամշակութային ժառանգությունը կդարձնեն երկրի կայուն համաչափ զարգացման ռեսուրս և զբոսաշրջության խթանման կարևոր գործոն: Ուստի մշակութային ժառանգության արժեքների պահպանությանը զուգահեռ անհրաժեշտ է ստեղծել, վերակառուցել և զարգացնել ժամանակակից զբոսաշրջային ենթակառուցվածքներ: Ներկայումս Հայաստանը կանգնած է իր տարածքում գտնվող համաշխարհային մշակութային ժառանգության արժեքների պաշտպանության, դրանք աշխարհին ներկայացներու խնդրի լուծման առաջ:

ПРОБЛЕМЫ МУЗЕЕФИКАЦИИ ДВИНА - ДРЕВНЕЙ СТОЛИЦЫ АРМЕНИИ

АРЕВ САМУЕЛЯН

В статье рассматриваются вопросы сохранения и организации музеефикации древней армянской столицы Двин. Вышеупомянутые проблемы требуют скорейшего решения, а также проведения комплексных мер. Многолетние археологические раскопки на территории Двина раскрыли богатый, многослойный архитектурный и градостроительный материал, относящийся к разным, последовательным историческим отрезкам. Имея богатое археологическое наследие, в случае проведения надлежащей музеефикации, Двин также может стать уникальным культурно-учебным центром.

Ключевые слова – музеефикация археологического наследия, Двин-историческая столица, археологический памятник, национальный археологический парк, создание заповедника, архитектурно-пространственная организация, экспозиция под открытым небе.

THE PROBLEMS OF MUSEUMIFICATION OF DVIN – THE HISTORICAL CAPITAL OF ARMENIA

AREV SAMUELYAN

The present article considers the problems of preservation and museumification of Armenia's historical capital Dvin. To solve the mentioned problems as soon as possible, complex measures need to be implemented. The archeological excavations of many years at the site of Dvin have uncovered ample multilayer architectural and urban planning material, pertaining to different consecutive historical periods. Such archeological heritage can be used to make Dvin a unique cultural-educational center, provided that adequate museumification work is accomplished.

Key words – museumification of the archeological heritage, ancient capital Dvin, archeological monument, national archeological park, reserve, architectural spatial organization, open-air exposition.